

10. ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով նախնական տվյալներ առաջին անգամ հրապարակվել են **2012թ. փետրվարի 7-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում**, որի ընթացքում ներկայացվել են տեղեկություններ մարդահամարի ընթացքում հաշվեգրված և առկա բնակչության թվաքանակի վերաբերյալ:

Այնուհետև, **2012թ. հոկտեմբերի 31-ին` «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-սեպտեմբերին»** տեղեկատվական ամսական զեկույցում ներկայացվել է ՀՀ մշտական և առկա բնակչության թվաքանակների նախնական ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի:

2013թ. հունվարի 31-ին «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույցում տեղեկություններ են հրապարակվել ՀՀ առկա և մշտական բնակչության թվաքանակների վերաբերյալ վերջնական, ամփոփ և մշտական բնակչության կրթական մակարդակի, ամուսնական կարգավիճակի վերաբերյալ նախնական ցուցանիշները:

2013թ. փետրվարին գրքույկով հրապարակվել են ՀՀ 2011թ. մարդահամարի նախնական արդյունքները:

2013թ. ապրիլի 30-ին «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-մարտին» զեկույցում ներկայացվել են տեղեկություններ ՀՀ մշտական և առկա բնակչության թվաքանակի, կանանց ծնելիության մակարդակի, գոյության միջոցների հիմնական աղբյուրների, ըստ ազգության և տարիքային խմբերի` բնակչության բաշխվածության, կրոնական դավանանքի, մայրենի լեզվի, քաղաքացիության երկրի և ծննդավայրի մասին, իսկ 2013թ. հուլիսի 31-ին` 2013թ. հունվար-հունիսի համանուն զեկույցում ներկայացվել են ՀՀ քաղաքային և գյուղական համայնքների առկա և մշտական բնակչության թվաքանակներն ըստ սեռի:

